«ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ» ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ

ծառայության մատուցման մրցույթին հայտերի ներկայացման հրավեր

Ծածկագիր՝ **ICARE-AC/035/AM/22**

1. Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հրավիրում է մասնագիտացված կազմակերպություններին՝ մասնակցելու հիմնադրամի «Մարդկային ռեսուրսների կառավարման» համակարգի ներդրման ծառայության մատուցման մրցույթին:

2. Հիմնադրամի գործունեությանը ծանոթանալու համար կարող եք այցելել Հիմնադրամի պաշտոնական կայք՝ www.icare.am:

Տվյալ հայտարարության բաղկացուցիչ մասերն են՝

Ա) Ծառայությունների մատուցման նկարագրությունը

Բ) Ներկայացվող հայտի բովանդակությունը

Գ) Հայտերի ներկայացման կարգը

Ա) Ծառայությունների մատուցման նկարագրությունը

Ակնկալվող ծառայությունը պետք է ենթադրի հետևյալ գործողությունները, սակայն կարող է չսահմանափակվել դրանցով՝

1. Ուսումնասիրել Հիմնադրամում առկա «Մարդկային ռեսուրսների կառավարման» քաղաքականությանը առնչվող փաստաթղթերը,

2. Հայերեն լեզվով մշակել և Հիմնադրամի հետ քննարկել «Մարդկային ռեսուրսների կառավարման» նոր քաղաքականությունը: Մշակված քաղաքականության փաստաթուղթը պետք է ներառի նվազագույնը հետևյալ բաժինները/ ենթաբաժինները՝

- Ներածական մաս,
- Աշխատանքային ռեժիմ և աշխատաժամանակ
- Աշխատանքային հարաբերությունների կարգավորում,
- Աշխատակիցների ընդունման (փորձաշրջան, անձնական տվյալների փաթեթ) և ազատման կարգը (նկատողությունների կարգ, ազատվող աշխատակցի փաստաթղթերի հանձման կարգը, այլն),

- Հայտարարությունների տեղադրման կարգ,
- Հարցազրույցների կազմակերպում, կադրերի ընտրություն և հավաքագրում (գնահատման թերթիկ, արձանագրություն, արխիվացում)
- Անձնակազմի կառավարում,
- Անձնակազմի արդյունավետության գնահատում (ընթացակարգեր, գնահատման թերթիկ, այլն),
- Մոտիվացիա և վարձատրություն (աշխատավարձ, պարգևավճարների համակարգ և այլ վճարներ),
- Ուսուցում և զարգացում,
- Թիմի կառուցում, կորպորատիվ միջոցառումներ,
- Գործուղումներ, օրապահիկի վճարման չափ,
- Փաստաթղթերի արխիվացում, տեղեկատվության փոխանակում (աշխատակազմի հանդիպում, էլեկտրոնային նամակագրության համակարգ),
- Սոցիալական պատասխանատվություն,
- Գենդերային / գենդերազգայուն քաղաքականություն, սոցիալապես խոցելի խմբեր,
- Կազմակերպության՝ շրջակա միջավայրի պահպանության սկզբունքներ,
- Առողջության ապահովագրության կարգ,
- Էթիկայի կանոններ,
- Շահերի բախում,
- Աշխատավարձերի վերանայում՝ կախված աշխատակցի կատարողականի գնահատումից, ինչպես նաև արտաքին գործոններից, օրինակ՝ գնաճ,
- Այլն։

3. Իրականացնել հիմնադրամի բոլոր աշխատակիցների համար մեկօրյա վերապատրաստում՝ ներկայացնելով նոր մշակված ՄՌԿ քաղաքականությունը։

<u>Բ) Ներկայացվող հայտի բովանդակությունը</u>

Մասնակիցը իր հայտում պետք է ներկայացնի հետևյալ տեղեկատվությունը՝

1. Տեխնիկական առաջարկ, ներառելով հետևյալ ենթաբաժինները՝

- առաջարկվող ծառայությունների շրջանակում իրականացվելիք գործողությունների կատարման փուլերը և նկարագրությունը,
- նոր մշակվող «Մարդկային ռեսուրսների կառավարման» քաղաքականության առաջարկվող բաժինները/ենթաբաժինները (որպես օրինակ պետք է հաշվի

առնել վերոնշյալ թեմաները, վերջնական բովանդակությունը կքննարկվի ICARE հիմնադրամում առկա քաղաքականությունը ուսումնասիրելուց հետո) և դրանց հակիրճ նկարագրությունը,

- ընկերության պորտֆոլիոն՝
    - վերջին 3 տարիների աշխատանքային փորձը (պատվիրատուի անվանումը, նմանատիպ աշխատանքի նկարագրությունը, ժամանակահատվածը, անհրաժեշտության պարագայում այլ տեղեկատվություն),
    - առաջարկվող ծառայությունը մատուցող փորձագետ(ներ)ի ինքնակենսագրական(ներ)ը։
- Աշխատանքների կատարման ժամանակացույց՝ ծառայությունների մատուցման ակնկալվող սկիզբ, ավարտ, գործողությունների պլան՝ ըստ շաբաթների,

2. **Ֆինանսական առաջարկ,** ներառելով բյուջեի ձևավորման մանրամասն տողերը։ Ծառայությունների մատուցման ընդհանուր արժեքը պետք է պարունակի բոլոր հարկերը: Եթե կազմակերպությունը հանդիսանում է ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) վճարող, ապա ընդհանուր բյուջեն պետք է ներկայացնել առանց ԱԱՀ։

Գ) Հայտերի ներկայացման կարգը

Հայտերը պետք է ներկայացնել հայերեն տարբերակով։ Հայտերը պետք է ներկայացվեն թղթային տարբերակով փակ կնքված և ստորագրված ծրարով՝ մինչև 2022թ. հուլիսի 27-ը, ժամը 18:00 ք. Երևան, Տերյան 74 հասցեով: Նշված ժամկետից հետո ստացված հայտերը չեն մասնակցելու հայտերի բացմանը, որը տեղի կունենա 2022թ. հուլիսի 28-ին, ժամը 11:00-ին Հիմնադրամի գրասենյակում:

Դիտարկվելու են միայն այն հայտերը, որոնք լիովին համապատասխանում են սույն հայտարարության «Բ. Ներկայացվող հայտի բովանդակությունը» բաժնի պահանջներին։

Առաջարկները պատրաստելիս կարող եք կապ հաստատել հետևյալ հեռախոսահամարով՝ +374 55 04 05 41 Լուսինե Թադևոսյան։